

# ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԽՈՐՀՐԴԻ

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ թիվ 10

ք. Երևան

24.12.2010թ.

Ներկա էին խորհրդի 72 անդամներից 59-ը:

Նախագահող՝ խորհրդի նախագահ Ս. Սարգսյան:

### Օրակարգում.

1. Երևանի պետական համալսարանի 2009/2010 ուսումնական տարվա գործունեության վերաբերյալ ռեկտորի հաշվետվության գնահատում:
2. Երևանի պետական համալսարանի 2010 թվականի (հունվար-նոյեմբեր) եկամուտների և ծախսերի կատարողականի հաստատում:
3. Երևանի պետական համալսարանի 2011թ. ֆինանսական տարվա եկամուտների և ծախսերի նախահաշվի (բյուջե) հաստատում:
4. «Երևանի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության (նոր խմբագրությամբ) նախագծի հաստատում:
5. Ընթացիկ հարցեր:

**ԵՊՀ խորհրդի նախագահ Սերժ Սարգսյան** - Երևանի պետական համալսարանի խորհրդի հարգելի անդամներ նախորդ նիստից հետո կյանքից հեռացել է Երևանի պետական համալսարանի խորհրդի անդամ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Ֆադեյ Սարգսյանը: Խնդրում եմ մեկ րոպե լռությամբ հարգենք նրա հիշատակը:

Այսօրվա խորհրդի նիստին մեր 70 գործընկերներից մասնակցում են 60-ը և մենք իրավունք ունենք սկսել նիստը: Եթե այլ առաջարկություններ չկան, ես առաջարկում եմ սկսել խորհրդի նիստը:

Այսօրվա նիստի օրակարգը ձեզ ծանուցվել է, եթե չկան առաջարկություններ օրակարգի վերաբերյալ, առաջարկում եմ հաստատել տվյալ օրակարգը: Օրակարգի առաջին հարցը զեկուցելու համար խոսքը տրամադրենք ԵՊՀ ռեկտոր Արամ Սիմոնյանին:

**1. ԵՊՀ ռեկտորի հաշվետվությունը ԵՊՀ 2009/2010 ուսումնական տարվա գործունեության վերաբերյալ:**

*Ձեկ. ԵՊՀ ռեկտոր Արամ Սիմոնյան*

**Ա. Սիմոնյան** - ԵՊՀ խորհրդի մեծարգո՝ Նախագահ, խորհրդի հարգարժան անդամներ, իննսունամյակը բոլորած Երևանի պետական համալսարանը մեր երկրի բարձրագույն կրթության ոլորտում իր առաջատար դերը բարձրացնելու, աշխարհի լավագույն համալսարաններին և գիտակրթական կենտրոններին համահավասարվելու և ձեռքբերումները ընդլայնելու նպատակով, ինչպես բոլոր տարիներին հաշվետու ժամանակաշրջանում ևս իրականացրել է բուհական աշխատանքներ ուսումնական, գիտական, մշակութային, սոցիալական, հասարակական և այլ ոլորտներում:

Հարգելի գործընկերներ, ցանկացած ձեռնարկ ամբողջացնելու և հավուր պատշաճի գնահատելու համար անշուշտ անհրաժեշտ է անդրադառնալ նրա ողջ ընթացքին՝ աչքաթող չանելով ոչ մի քայլ՝ դրական, թե բացասական, օգտակար և ոչ չափավետ: Եվ քանի որ այս ուսումնական տարում լրանալու է ռեկտորի պաշտոնավարման ժամկետը, ուստի նպատակահարմար եմ գտնում ձեր ուշադրությանը ներկայացնել ոչ միայն ԵՊՀ գործունեությունը հաշվետու ժամանակաշրջանում, այլ նաև մասնակիորեն ամփոփել նախընթաց ժամանակահատվածը ևս:

Համալսարանում մեկնարկեցին և արդյունավետ ծավալվեցին կրթական բարեփոխումների գործընթացներ: Ժամանակի պահանջներին բավարարելու և համալսարանի առաքելությունը արդյունավետ կերպով իրականացնելու համար ձեռնարկվեցին միջոցառումներ կրթության բովանդակային նորացման, դասավանդման և ուսումնառության նոր և առավել առաջադիմական կրթական համակարգերի ներդրման, ուսանողների գիտելիքների գնահատման և մի շարք այլ ուղղություններով:

Ես կանգ կառնեմ միայն առանցքային խնդիրների վրա: Ամենամեծ ձեռքբերումներից մեկտ կրեդիտային համակարգով ուսուցման ներդրումն էր Երևանի պետական համալսարանում, որի արդյունքում մենք այսօր թե բակալավրիատում, թե մագիստրատուրայում, թե ասպիրանտուրայում և նաև լրացուցիչ կրթության ոլորտում ունենք կրեդիտային համակարգի վրա հենված կրթական ծրագրեր: Որպեսզի մենք կարողանայինք այս նոր համակարգով աշխատել, նախ և առաջ պետք է մտածեինք կրթության որակի ապահովման մեխանիզմների ստեղծման մասին: Վերջին երեք տարիների ընթացքում մշակվեցին և ներդրվեցին որակի ներքին ապահովման համակարգը Եվրոպական բարձրագույն կրթական տարածքի որակի ապահովման ստանդարտներին, ուղենիշներին և սկզբունքներին համապատասխան: Պետք է նշեմ,

որ դրա շնորհիվ չափազանց հեշտացվեց ուսանողների համար կրթական համակարգը և դարձավ պարզ, թափանցիկ և հասկանալի: Վերոհիշյալ համակարգը էապես նպաստեց Երևանի պետական համալսարանում հակակոռուպցիոն միջոցառումների անցկացման համար: Բարձրագույն կրթության հիմնական գրավականը գործընկերության շրջանակներում աշխատաշուկայի համապատասխան մասնագետների պատրաստումն է: Այս բնագավառում ևս անցած տարիների ընթացքում ԵՊՀ-ն կատարեց որոշակի քայլեր: Միջազգային չափանիշներով կորպորատիվ համալսարանների հիմնումը մեզանուն դանդաղ, բայց շունչ է առնում և Սինոփսիս Արմենիա ընկերության հետ մեր շահավետ համագործակցությունը, ինչպես նաև նմանատիպ համագործակցություն մի շարք այլ ընկերությունների հետ դրա լավագույն ապացույցն է: Համալսարանը նաև ակտիվ մասնակցություն ունեցավ նաև որակի ապահովման և գնահատման խնդիրների շուրջ հանրապետական միջոցառումներին, սեմինար-քննարկումների և աշխատաժողովների: Դրա հետևանքով բարելավվեց ուսումնական գործընթացի ընթացիկ կազմակերպումը և թեստային համակարգի ներդրման շրջանակներում կատարվեցին մի շարք նախապատրաստական աշխատանքներ, որոնք որակական նոր թափ հաղորդեցին պրոֆեսորադասախոսական կազմի ձևավորմանը, նրանց աշխատածավալների ապտիմալացմանը, ինչպես նաև լսարանային ֆոնդի օպտիմալ օգտագործմանն ու դասերի իրականացմանը: Հաջորդ խնդիրը, որին կանդիդատնամ ընդունելության նախապատրաստումն ու իրականացումն է: Քանի որ այն բացասական միտումները, որոնք դիմորդների հոսքի պակասեցման են բերում որոշակիորեն խնդիրներ էին առաջացնում ընդունելության համար, ապա մենք ընդլայնեցինք համալսարանի գովազդարշավը հանրակրթական հաստատություններում՝ հիմնական և ավագ դպրոցներում, քոլեջներում և վարժարաններում: Այդ գործընթացում առավելագույնս ներգրավվեցինք ԵՊՀ բոլոր ուսումնական ստորաբաժանումները և հատկապես ֆակուլտետները: Մենք արդեն չորրորդ տարին անընդմեջ հրատարակում ենք դիմորդի ուղեցույցը, որն անվճար բաժանվում է դպրոցներում: Խիստ կարևորելով մասնագիտական կողմնորոշման գործընթացը՝ մենք հասանք նրան, որ տարբեր ֆակուլտետների պրոֆեսորադասախոսական կազմի շատ ներկայացուցիչներ արդեն ավանդական հանդիպումներ են ունենում դպրոցներում, զրուցում աշակերտների հետ, ինչպես նաև ավանդույթ է դարձել բարձր դասարանների աշակերտների այցելությունները Երևանի պետական համալսարան: Այս տարի երեսունհինգ ավագ դպրոցների և վարժարանների հետ Երևանի պետական համալսարանը կնքել է երկարաժամկետ համագործակցության համաձայնագրեր ավարտական

դասարանների աշակերտների մասնագիտական կողմնորոշման, Բուհ ընդունվելու նախապատրաստելու և ճանաչողական այլ գործունեություն իրականացնելու շուրջ:

Այս տարի ընդունելությունը, ինչպես նախկինում ընթացել է բավականին հաջող, մենք այս տարի ունեցել ենք 4805 դիմորդ, որից 3006-ը ընդունվել է ԵՊՀ բակալավրիատ պետական պատվերով և վճարովի համակարգեր:

Դասախոսական կազմի և ուսումնական ծանրաբեռնվածության հարցում, ինչպես արդեն նշել են, կարարվել են որոշակի բարեփոխումներ, շարունակվում է ԵՊՀ դասախոսական կազմի երիտասարդացման գործընթացը, սակայն պետք է նշել, որ այստեղ մենք դեռևս ունենք լուրջ խնդիրներ, որոնց ուղղությամբ պետք է շարունակել աշխատել՝ մասնավորապես առաջացած տարիքի դասախոսները դժվարությամբ են նամակերավում նրա հետ, որ իրենց ծանրաբեռնվածության մի մասը պետք է զիջեն երիտասարդ դասախոսներին և ավել շատ կենտրոնանան գիտական աշխատանքի վրա:

Դասախոսների որակավորման բարձրացման և մասնագետների վերապատրաստման խնդրում ԵՊՀ-ն անցած տարիների ընթացքում որոշակի առաջընթաց է ապրել: Մենք հիմնականում անցկացնում ենք երկու կրթական ծրագրերով դասախոսների որակավորման բարձրացում և վերապատրաստում:

Տեղեկատվական ռեսուրսների զարգացման ոլորտում նույնպես որոշակի լուրջ քայլեր են կատարվել: Տեղեկատվական տեխնոլոգիաների համալսարանական կենտրոնը անցած երկու տարիների ընթացքում նախապատրաստեց և այս տարի գործարկվեց հանրապետությունում եզակի մագիստրոսական ծրագիր Ռոստոկի համալսարանի հետ համատեղ Վիզուալ հաշվարկ մասնագիտացմամբ: ՏՏ կենտրոնի մյուս ծրագիրը Հայկական վիրտուալ քոլեջն է, որի շրջանակներում արդյունավետ համագործակցում ենք Սփյուռքի նախարարության հետ: Մշակվել է նաև ՀՀ Բուհերի ասպիրանտուրայի ընդունելության «Ինֆորմատիկայի հիմունքներ» ծրագիրը և ԵՊՀ ուսումնական գործընթացի էլեկտրոնային կառավարման օժանդակման ծրագրերը:

Մենք այս տարի հաստատեցինք ԵՊՀ ռազմավարական զարգացման ծրագրի կատարման ժամանակացույցը, որում հստակ նշված են քայլերի կատարման ժամկետները, իրականացնող ստորաբաժանումները և պատասխանատուները: Մենք պարբերաբար գիտական խորհրդում լսում ենք տեղեկատվություն իրականացված միջոցառումների և դրանց արդյունքների մասին:

Մեծ աշխատանք է տարված գիտահետազոտական գործունեության ոլորտում: Արդեն տպագրված են գիտահետազոտական գործունեության առանցքային ցուցանիշները վերջին տասը տարիների ընթացքում, որից պարզ երևում է առկա ժառանգականությունը որը ունեցել ենք իննսունականների վերջերից առ այսօր:

Սակայն ցավով պետք է նշենք, որ գիտահետազոտական աշխատանքների առևտրայնացման, կիրառական ոլորտներում դրանք իրականացնելու խնդրում մենք ունենք շատ մեծ պրոբլեմներ և մատների վրա կարելի է հաշվել այն գիտահետազոտական արդյունքները, որոնք կարողանում ենք հանել շուկա:

Հաջորդ խնդիրը հրատարակչական, խմբագրական գործունեությունն է, որում ԵՊՀ-ն միշտ է առանձնակի մեծ գործ է կատարել: Մեր հրատարակչությունը Հայաստանում ամենահինն է, գործում է 1919թ.-ից և պետք է հպարտությամբ նշենք, որ Երևանի պետական համալսարանում խորհուրդների կողմից երաշխավորված և ոչ մի աշխատանք առանց տպագրվելու չի մնում: Առանձնակի կնշենք մեր գիտական պարբերականների մասին: Մենք ունեինք երկու գիտական պարբերականներ՝ Գիտական տեղեկագիրը բնագիտական թևի և Բանբեր Երևանի համալսարանի ամսագիրը՝ հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական մասնագիտությունների համար: Այսօր այդ երկու ամսագրերը վերածվել են թվով ինը ամսագրերի: Նույն հաճախականությամբ երեք սերիայով թողարկվում է Տեղեկագիրը՝ ընդ որում ֆիզիկամաթեմատիկական գծով՝ միայն անգլերենով, իսկ մյուս երկուսը ռուսերեն և հայերեն՝ համապատասխան անոտացիաներով: Բանբերը հրատարակվում է վեցը սերիայով՝ ընդգրկելով մեր բոլոր հումանիտար ոլորտները: Այս ձեռքբերման համար պետք է հատուկ շնորհակալություն հայտնել և խմբագրական կոլեկտիվին, և բոլոր աշխատակիցներին:

Մի քանի բառով անդրադառնամ մեր միջազգային համագործակցությանը: Անցած տարվա ընթացքում մենք կնքել ենք 15 նոր պայմանագրեր: Պետք է նշենք, որ չափազանց սերտ համագործակցում ենք Ղազախստանի, Ռուսաստանի, Գերմանիայի, Անգլիայի, Իտալիայի, Ֆրանսիայի համալսարանների հետ: Մեր ծավոր արևելքում սերտ կապեր ենք հաստատել Սիրիայի համալսարանների հետ, Հալեպի համալսարանում արդեն բացվել է հայագիտության կենտրոն, որում արդեն իրականացվում է հայերենի ուսուցում: Առանձնակի պետք է նշել Աստանայի համալսարանի հետ սերտ համագործակցությունը, որում այս տարի մենք անցկացրեցինք Երևանի պետական համալսարանի օրեր, որի ընթացքում մեր դասախոսները կարդացին դասախոսություններ: Մարդ ամսին պլանավորում ենք անցկացնել Աստանայի համալսարանի օրերը Երևանի պետական համալսարանում: Ղազախստանի կողմը շահագրգռված է գիտական համագործակցությամբ:

Կցանկանամ անդրադառնալ նաև սոցիալական քաղաքականությանը: Հաշվետու տարում սոցիալական ոլորտում կատարվել են որոշակի աշխատանքներ և սոցիալական քաղաքականությունը նպաստել է սոցիալական արդեն առկա սոցիալական փաթեթի ամբողջականացմանը: Այս հարցի սահմաններում ես պետք է

խոսեմ մի կարևոր հարցի մասին, որը տարբեր արձագանքներ է առաջ բերում համալսարանականների շրջանում: ՀՀ Նախագահը ևս բազմիցս անդրադարձել է այդ խնդրին, այն է կոռուպցիայի և կաշառակերության հիմնախնդրին: Պաղտնիք չէ, որ այդ երևույթները ևս կան համալսարանում: Ես գտնում եմ, որ ԵՊՀ կոլեկտիվը այլևս չի կարող լիբերալ վերաբերմունք ցուցաբերել կաշառակերության երևույթի դեմ: Ավելին համալսարանում արդեն գործում է հակակոռուպցիոն հանձնաժողով, աշխատանքները ղեկավարում է ռեկտորը, կազմում կան ուսանողների, դասախոսական և վարչական կազմի ներկայացուցիչներ: Մենք արդեն պատրաստում ենք լայն, համակողմանի ծրագիր, առաջարկություններ ենք ներկայացրել նախարարության հակակոռուպցիոն ծրագրին: Կարծում եմ, որ այսուհետ ԵՊՀ-ում բոլոր գիտական խորհուրդներում հաղորդումներ կներկայացվեն այդ հանձնաժողովի գործունեության մասին, փետրվար ամսից գործածության մտնող ծրագրի մասին և ուզում եմ նկատել, որ կրթական գործընթացի հստակեցման գործունեությունը որոշակիորեն արդյունք տալիս է, որը սակայն դեռ բավարար չէ և մենք պետք է կտրուկ փոխենք մեր վերաբերմունքը երևույթի նկատմամբ՝ այն համարելով որ միայն հակաօրինական, այլև հակաբարոյական և ոչ հարիր Երևանի պետական համալսարանին: Կցանկանայի նշել, որ այդ գործում մեզ օգնում են նաև սոց. հարցումների արդյունքների վերլուծությունը:

Ինչ վերաբերվում է ուսանողների, շրջանավարտների և հասարակայնության հետ կապերի ոլորտում տարվող աշխատանքներին, ապա մենք կարող ենք նշել, որ ունենք չափազանց ակտիվ ուսանողական կազմակերպություններ, որոնք տարվա ընթացքում մեծ գործ են կատարել, որը պետք է շարունակվի և ԵՊՀ վարչական և դասախոսական կազմը իր համերաշխությունն է հայտնում և պարտավորվում օգնել ընդհանուր գործի հաջողության համար:

Վերջում կուզենայի նաև նշել լաբորատոր սարքավորումների ծրագրի մասին, որը մեծ ոգևորություն է առաջացրել ֆակուլտետներում և կառաջարկեմ դիտել փոքրիկ ֆիլմ, որը դիտելով կհամոզվեք, որ ՀՀ Նախագահի ջանքերով այդ ծրագրի կյանքի կոչելը չափազանց մեծ նշանակություն ունի համալսարանի համար: Միջոցների երկու երրորդը տրամադրվել է բարեգործական ֆոնդերից, իսկ մեկ երրորդը տրամադրել է ԵՊՀ-ն: Եռամյա այս ծրագիրը կյանքի կկոչվի ԵՊՀ-ում և այս սարքերը կծառայեն ոչ միայն ուսումնական այլև գիտահետազոտական նպատակներով:

Այսքանով կավարտեմ իմ ելույթը, կառաջարկեմ դիտել ֆիլմը, իսկ մնացած հարցերին պատրաստ եմ պատասխանել:

Շնորհակալություն ուշադրության համար:

**Ս. Սարգսյան (խորհրդի նախագահ)** – Մինչ ֆիլմի դիտումը առաջարկում եմ, եթե հարցեր կան, ապա դրանք ուղղել պարոն Սիմոնյանին: Կա՞ն հարցեր:

**Վ. Դումանյան** – Պարոն Սիմոնյան, կաշառակերության բնույթը բոլորս էլ հասկանում ենք, ես միայն կցանկանայի ճշտել, թե ինչ նկատի ունենք նշելով, որ համալսարանում առկա է կոռուպցիա:

**Ա. Սիմոնյան** – Նշելով կոռուպցիայի մասին համալսարանում, ես նկատի ունեմ միայն դրամաշորթության դեպքերը: Դասական առումով կոռուպցիա համալսարանում գուցե չենք հանդիպում, սակայն դրամաշորթության դեպքերին մենք հանդիպում ենք:

*Այլ հարցեր չեղան:*

**Ս. Սարգսյան (խորհրդի նախագահ)** - Առաջարկում եմ դիտել ֆիլմը և ապա անցնել ելույթներին:

*Ֆիլմի դիտում:*

*Ելույթների համար հերթագրվեցին Յ. Ակուայանը, Մ. Գրիգորյանը, Ա. Սահակյանը, Ա. Մելքոնյանը, Գ. Մելիքյանը, Լ. Շեկյանը, Է. Մինասյանը, Վ. Դումանյանը, Հ. Սարգսյանը, Ս. Առաքելյանը, Ռ. Ավագյանը:*

**Յ. Ակուայան** - Մեծարգո պարոն նախագահ, հարգելի խորհրդի անդամներ

Շնորհակալություն ելույթի հնարավարության համար: Հաշվի առնելով խնդրի հնչեղությունը ուսանողության շրջանում ես ցանկանում եմ անդրադառնալ հետևյալ խնդրին:

Անցած տարի խորհրդի նիստում քննարկվեց և ընդունվեց ԵՊՀ զարգացման ռազմավարությունը: Ուսանողների առաջարկով և ԵՊՀ խորհրդի նախագահի աջակցությամբ ներկայացված նախագծում տեղ գտավ կոռուպցիայի դեմ պայքարի խնդիրը: Այդուհանդերձ, պետք է նշել, որ համալսարանի ղեկավարությունը բազմիցս նշում է, որ համալսարանում կոռուպցիա չկա, այլ կան կաշառակերության առանձին դեպքեր: Միաժամանակ, հանրապետության վարչապետի, կրթության և գիտության նախարարի, միջազգային տարբեր կառույցների գնահատականով բուհական համակարգում կառուպցիան բավականին անհանգստացնող չափերի է հասել: Ուսանողական խորհուրդը մոտ երկու ամիս առաջ նամակով դիմել է հանրապետության վարչապետին և պատրաստակամություն հայտնել աջակցել կառավարության նախաձեռնություններին: Եվ ահա, վերջերս ուսանողական խորհուրդը ամփոփեց և կրթության ու գիտության նախարարություն ներկայացրեց

վերջինիս կողմից մշակված կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի համալիր ծրագրի վերաբերյալ առաջարկություններ՝ շուրջ 15 էջ: Ուսանողական խորհրդի առաջարկությունները ներառում են համալսարանական կյանքի տարբեր ոլորտներ: Ի դեպ նշեմ, մեր առաջարկություններից շատերը բխել նաև ՀՀ կառավարության կողմից ընդունված հակակոռուպցիոն ռազմավարությունից և նրանով նախատեսված միջոցառումներից: Մեր կողմից առաջարկվել է բուհերում ընդլայնել տեղեկատվության ազատությունը, թափանցիկություն ու հրապարակայնությունը: Օրինակ՝ կայքում հրապարակել գնումների մասին հայտարարությունները, դրանց արդյունքները, ապահովել ուսանողներից ու քաղաքացիներից ստացվող գրավոր դիմումներին պարտադիր գրավոր պատասխանելու ընթացակարգը, ապահովել տեղեկատվություն ստանալու գործուն մեխանիզմներ և այլն: Առաջարկվել է Կատարելագործել բուհերում աշխատանքի ընդունման գործընթացը: Այսօր հաճախ կադրերի ընտրության համար չեն լինում հայտարարություններ, մրցույթներ, սահմանված չեն կրթական հաստատությունների աշխատակիցների վարքագծի միասնական կանոնները, որոնք, ի դեպ, կառավարության ռազմավարությամբ նույնպես նախատեսված են:

Մենք առաջարկում ենք նաև բարձրացնել բուհերի խորհուրդների դերակատարությունը: Օրինակ՝ առաջարկվում է խթանել բուհերում ներքին աուդիտի համակարգը: Բուհերի խորհուրդները կարող են նշանակել բուհի գլխավոր աուդիտորին՝ բուհի ներքին աուդիտորական ծառայության ղեկավարին, որը իրականացնելով իր գործառույթները՝ տարին մեկ համապատասխան հաշվետվություն կներկայացնի բուհի խորհրդին: Առաջարկում ենք խթանել ուսանողական ինքնակառավարումն ու սովորողների մասնակցությունը հակակառուպցիոն ծրագրերում: Որպես խթանիչ գործիք նրանց համար կազմակերպել դատուկ դասընթացներ: Առաջարկում ենք պարբերաբար իրականացնել Կոռուպցիոն ռիսկերի ուսումնասիրություններ: Ի դեպ ուսանողական խորհուրդը առաջիկա ամսում հրապարակելու է “Սոցիոմետր” անկախ սոցիոլոգիական կենտրոնի հետ համատեղ կատարած ուսումնասիրությունների արդյունքները:

Եվ ի վերջո, ամենա կարևոր հարցերից մեկը, առաջարկում ենք հստակեցնել և թափանցիկ դարձնել Կրթական գործընթացը: Դեռևս խորհրդի անցած նիստում մենք առաջարկեցինք հրապարակել ընթացիկ ու հանրագումարային քննությունների արդյունքները: Հետագա քննարկումների ընթացքում մեզ պատասխանեցին, որ դա մարդու իրավունքների խախտում է, թեև մարդու իրավունքների պաշտպան պարոն Հարությունյանը այդ կարծիքը չուներ: Այսօր նույնպես հանդես ենք գալիս նույն առաջարկով: Միաժամանակ անհրաժեշտ է առարկաների քննական հարցերը և կոնկրետ առարկայի դասավանդմանը վերաբերող այլ տեղեկատվություն՝ ծրագիր,

գրականություն և այլն, նույնպես դարձնել հասանելի գրադարանում և տեղադրել կայքում: Անհրաժեշտ է թափանցիկ դարձնել համալսարանի ներսում ասպիրանտուրայի տեղերի բաշխման վերաբերյալ որոշումների ընդունման գործընթացը: Անհրաժեշտ է հստակեցնել տեղափոխությունների և միջազգային փոխանակման ծրագրերին մասնակցելու ընթացակարգերը, հրապարակել բոլոր տեղափոխությունների մասին տեղեկատվությունը: Անհրաժեշտ է արգելել լուծարքային շրջանից դուրս քննությունների լրացուցիչ վերահանձնման թույլտվությունների պրակտիկան:

Ներկայումս ուսանողների շրջանում տարին երկու անգամ իրականացվում է դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցում, որի նպատակն է ի հայտ բերել առկա խնդիրները: Սակայն հետաքրքրականը այն է, որ այդ հարցումը իրականացնում են ուսումնական պրոցեսի համար պատասխանատու օղակները՝ դեկանատներն ու ուսումնական վարչությունը: Մինչ դեռ ամենատարրական տրամաբանությունը հուշում է, որ գործընթացի կազմակերպիչը չի կարող ինքն իրեն գնահատելու կամ վերահսկելու ուղղությամբ միջոցառումներ իրականացնել: Թերևս կարող է, բայց միայն իր ներքին օգտագործման համար, այլ ոչ թե հրապարակելու, փաստանշելու և դեռ ավելին՝ դասախոսների մրցույթի համար հիմք ընդունելու համար: Այս աշխատանքները առաջին մոտեցմամբ ևս կարելի է վերապահել ներքին աուդիտորին, որը կապահավի նաև ուսանողական խորհրդի և այլ օղակների մասնակցությունը:

Հարգելի խորհրդի անդամներ, հասկանալով որ ժամանակը խիստ սահմանափակ է, ես ներկայացրեցի մեր առաջարկությունների որոշ մասի հակիրճ նկարագրությունը: Ցավով պետք է նշեմ, որ համալսարանում իրականացվող բարեփոխումների տեսանկյունից շատ քիչ արդյունավետ նպատակային աշխատանք է տարվում կոռուպցիայի դեպ պայքարի հարցերի վերաբերյալ: Սահմանափակվում են միայն երևույթը ժխտելու կամ լավագույն դեպքում “որտեղ չկա կառուպցիա” արտահայտությամբ: Երբեմն էլ ներհամալսարանական որոշ ուսումնական ընթացակարգերի ընթացիկ հստակեցումները ներկայացվում են որպես այս ուղղությամբ կատարած բավարար աշխատանք: Առաջարկում եմ այս հարցերը դարձնել խորհրդի մշտական հոգացության առարկա և մշակված ծրագրերին և կատարված աշխատանքներին հանգամանալից անդրադարձնալ հաջորդ նիստում:

Մեծարգո պարոն նախագահ, ցանկանում եմ ուսանողական խորհրդի անունից վստահեցնել, որ մենք ունենք բավարար կամք և ներուժ, գործընկերը դառնալու բոլոր այն ծրագրերի, որոնք իրապես միտված են լինելու կոռուպցիայի զսպմանն ու կրճատմանը: Շնորհակալություն:

**Մ. Գրիգորյան** – Մեծարգո Նախագահ, հարգելի ռեկտոր, խորհրդի հարգարժան անդամներ, լսեցինք ռեկտորի հաշվետվությունը և գտնում են, որ այն պետք է գնահատել բավարար: Այս տարվա ամենաշատ աչքի ընկնող ձեռքբերումը ես համարում եմ այն սարքավորումները, որը մենք ձեռքբերեցինք լաբորատորիաների կոնսլեկտավորման համար: Կարող եմ նշել, որ վերջին երեսուն տարում նման մեծ ձեռքբերում չէր եղել: Դա տեղի ունեցավ մեծարգո Նախագահի ակտիվ մասնակցությամբ, որի համար ցանկանում եմ շնորհակալություն հայտնել: Ես հպարտ եմ նաև մեր երկրի կյանքում Ձեր կատարած բոլոր այլ քայլերի համար և բոլոր Ձեր ձեռնարկումներում ցանկանում եմ հաջողություն:

**Ա. Սահակյան** - Մեծարգո Նախագահ, հարգարժան ռեկտոր, խորհրդի հարգելի անդամներ, նախ ցանկանում եմ շնորհակալություն հայտնել մանրամասն զեկուցման և բաժանված փաստաթղթերի համար և առաջարկում եմ հավանություն տալ կատարված աշխատանքներին և դրանք գնահատել բավարար: Ես ուզում եմ խոսել մի հարցի մասին, որը քննարկվել է վերջին գիտական խորհրդում և որը, կարծում եմ, հուզում է համալսարանականներից շատերին: Ընթանում են բուհական չափորոշիչների մշակման աշխատանքները և նոր չափորոշիչների համապատասխան համալսարանի շրջանավարտները չեն կարող մասնագիտական որակավորմանը զուգընթաց ստանալ նաև ուսուցչի որակավորում: Ես չգիտեմ, թե դա ինչով է պայմանավորված, բայց կարծում եմ, որ դա կունենա որոշակի բացասական հետևանքներ: Առաջինը և ամենահիմնականը այն է, որ դպրոցի դռները փակվում են համալսարանական շրջանավարտների առջև: Այժմ դպրոցներում աշխատող ուսուցիչների մեծ մասը համալսարանական շրջանավարտներ են: Գաղտնիք չէ, որ դպրոցը ունի կարիք որակյալ կադրերի, գաղտնիք չէ նաև, որ մեր մանկավարժական բուհերի շրջանավարտների փոքր մասն է բավարարում այդ պահանջներին: Կարծում եմ նաև, որ նման որոշումից հետո համալսարանական շրջանավարտը, մանավանդ մարզերից եկող ուսանողները, վերադառնալով գյուղ չեն ունենա աշխատատեղ: Ստացվում է այնպես, որ դպրոցի շրջանավարտը արդեն պետք է որոշի, թե պետք է դառնա ուսուցիչ, թե դասախոս կամ գիտնական: Սա է իմ մտահոգությունը և կխնդրեի Կրթության և գիտության նախարարությանը և նախարարին գտնել այնպիսի լուծում, որը համալսարանական շրջանակների առջև կբացի դպրոցի դռները:

**Ս. Սարգսյան (խորհրդի նախագահ)** - Ես կխնդրեմ, որ Կրթության և գիտության նախարարը պատասխանի Ձեր հարցին, սակայն չեմ կարծում, որ կարելի է այնպիսի

քայլ անել, որ համալսարանական շրջանավարտը զրկվի դպրոցում դասավանդելու հնարավորությունից:

**Ա. Աշոտյան** - Մեծարգո պարոն Նախագահ, հարգելի գործընկերներ, ՀՀ կառավարության 2007թ.-ի համապատասխան որոշմամբ սկիզբ դրվեց այդ գործընթացին, որի արդյունքն է այսօրվա խնդիրը: 2009թ.-ին ընդունվեց Հանրակրթության մասին օրենքը, որում սահմանվում է, որ միայն մանկավարժական կրթությամբ մասնագետը կարող է դասավանդել դպրոցում: Ահա այս երկու օրենքների սահմանում էլ ծնվեց տվյալ խնդիրը: Եթե 2007թ.-ին բուհերի կողմից բարձրաձայնվեք, ապա այս հարցը չէր ծագի: Մի շարք այլ բուհերի կողմից ևս բարձրաձայնվել է այս հարցը, և մենք պատրաստվում ենք լուծել կրկնակի որակավորման հարցը և առավել համապարփակ լուծելու այդ խնդիրը հետագայում:

**Ա. Մելքոնյան** - Մեծարգո Նախագահ, հարգարժան ռեկտոր, հարգելի գործընկերներ, ես կցանկանամ անդրադառնալ մեկ այլ խնդրի, որը բոլորիս է հուզում: Դա վերջին շրջանում Հայոց բանակի դեմ սկսված կեղտոտ կոմպանիան է, որին պետք է վերջ տալ: Մենք բազմիցս լինում ենք զորամասերում և շատ անգամներ զգում ենք, որ մեր զինվորականությանը թողել ենք միայնակ: Շատ անգամներ լսում ենք, որ նրանք նշում են, որ հասարակությունից վիրավորված են: Առանձին դեպքերի արդյունքում ցեխը շարտվում է Ազգային բանակի վրա, և մենք այս հարցում լռություն ենք պահպանում: Կարծում են, որ պետք է մեծ արշավ սկսենք այս կեղտոտ խաղին վերջ տալու համար: Անթույլատրելի է, որ մեր «դեղին» մամուլի գրված յուրաքանչյուր տող հաջորդ օրը գտնում ենք ադրբեջանական մամուլում: Ես կարծում եմ, որ մենք բանակի քարոզչության հարցում թերացել ենք և կոչ են անում հատկապես հումանիտար ֆակուլտետների գիտնականներին, դասախոսներին այցելել զորամասեր, հանդես գալ դասախոսություններով, որպեսզի մենք լինենք մեր զինվորականության կողքին:

Երկու խոսքով էլ թույլ տվեք անդրադառնալ կաշառակերության խնդրին: Հեշտ է քննարկել և մեղադրել մարդկանց: Առաջարկում եմ յուրաքանչյուրս մեր տեղում աշխատենք այդ ուղղությամբ, իսկ հայելին պետք է լինեն սոցիոլոգիական հարցումները և ուսանողությունը: Պետք է կարողանանք մշակել որոշակի կարգ, որպեսզի սոցիոլոգիական հարցումներում արտացոլված կարծիքները իրավական ուժ ստանան:

**Գ. Մելիքյան** – Խորհրդի մեծարգո Նախագահ, հարգարժան ռեկտոր, խորհրդի հարգելի անդամներ, ես նույնպես առաջարկում եմ ռեկտորի աշխատանքը գնահատել բավարար: Իրոք, հսկայածավալ աշխատանք է կատարվել համալսարանում և մենք

հայտնում ենք մեր գոհունակությունը: Այդ աշխատանքի մի մասը կատարվել է մեր ֆակուլտետում և պետք է նշեմ, որ այն պայմանագրերը, որոնք կնքել է ԵՊՀ-ն մեզ համար դարձել է կոնկրետ առարկայական: Մենք այսօր ունենք ուսանողներ, որոնք գործուղվում են Սանկտ-Պետերբուրգի համալսարան, Աստանայի համալսարան: Մեր դասախոսները տպագրվում են միջազգային հեղինակավոր հանդեսներում, որը համարում են շատ կարևոր: Թուրքագիտության ամբիոնը ընդլայնեց իր աշխատանքները և մենք այն վերանվանեցինք Թյուրքագիտության ամբիոն, որը ընդգրկեց նաև թուրքմենագիտությունը: Մենք ստեղծեցինք ամենավերջին տեխնիկայով հագեցած Ղազախագիտության կենտրոն, որը մեզ պարտավորեցնում է: Մեր կատարած բոլոր գործուղումները նպատակասլաց են, բոլորը ծառայում են իրենց նպատակին: Մեզ համար ռազմավարական նշանակություն ունեցավ Օսմանագիտության զարգացումը: Մեր գործուղված մասնագետներին հայրենասիրությունն է ստիպում վերադառնալ հայրենիք և աշխատել այստեղ: Այս հայրենասիրության մասին են ուզում խոսել, որը մեզ օգնում է պահել ՀԱյոց համալսարանը: Ես մտածում եմ, որ մենք պարտավոր ենք նեցուկ լինել ռազմահայրենասիրությանը, կրթել, դաստիարակել հայրենասեր սերունդ, զորավիզ լինենք հայոց գործին:

**Լ. Շեկյան** - Ես կցանկանայի անդրադառնալ մի շարք խնդիրների, որոնք անդրադառնում են օտարերկրյա քաղաքացիների հետ տարվող աշխատանքներին: Ճիշտ է, վերջին տարիներին վերանորոգվել և բարելավվել են մեր լսարանային պայմանները, սակայն մեզ համար արդիական է մնում ուսանողներին հանրակացարանային պայմաններով ապահովվելու հարցը: Ինչպես նաև օտարերկրյա քաղաքացիներին հետաքրքրելու համար անհրաժեշտ է ձեռնարկել համակարգված գովազդային արշավ, որում մենք կաղում ենք: Այդ հարցում մենք կարիք ունենք ՀՀ Գիտության և կրթության, Սփյուռքի և Արտաքին գործերի նախարարության աջակցության:

**Է. Մինասյան** - Մեծարգո Նախագահ, հարգարժան ռեկտոր, խորհրդի հարգելի անդամներ, նույնպես կնշեմ, որ կատարվել է մեծածավալ աշխատանք, որից մենք գոհ ենք և գնահատում ենք դրական: Այդ աշխատանքից անմասն չէ նաև Պատմության ֆակուլտետը: Կուզենայի նշել որ հաշվետու տարում վերանորոգվել են ֆակուլտետի երկու հարկերը, կահավորվել են լսարանները, բացվել են ազատամարտիկների անուններով լսարաններ: Հույս եմ հայտնում, որ հնարավոր կլինի վերանորոգել ամբողջ մասնաշենքը և լուծել լսարանային խնդիրը, քանի որ այդ մասնաշենքում տեղակայված

են երեք ֆակուլտետներ: Կուզենայի նշել, որ մեծ աշխատանք է տարվել զորամասերում, մենք հանդես ենք եկել տարբեր դասախոսություններով: Մեր այցելությունները ցույց են տալիս, որ բանակը կայացած է և երաշխիքն է մեր անվտանգության: Մյուս կարևոր խնդիրը, որ կցանկանայի բարձրաձայնել, վերաբերում է հայագիտության զարգացմանը: Ցանկանում են շնորհակալություն հայտնել պարոն Նախագահին հայագիտությունը կարևորելու և գերակա ուղղություն հռչակելու կապակցությամբ, բայց կցանկանայինք, որ պետական բյուջեից ֆինանսավորվող թեմաների քանակը ավելանար և կնշեն, որ, այնպիսի կարևոր հայագիտական թեմաներ, ինչպիսիք համշենահայության խնդիրն է կամ Ռուսաստանի քաղաքականությունը հարավային Կովկասում ընդհանրապես չեն ֆինանսավորվել: Ես այս հարցով դիմում եմ նաև Գիտության պետական կոմիտեի նախագահին, որպեսզի հնարավորություն ստեղծվեր այդ թեմաներով աշխատանք տանելուն:

Ես նույնպես կնշեն, որ Պատմության ֆակուլտետում նույնպես առկա է մանկավարժի որակավորում ստանալու խնդիրը, քանի որ մարզերի դիմորդների մեծամասնությունը ցանկանում է վերադառնալ մարզ և զբաղվել ուսուցչական աշխատանքով:

**Վ. Դումանյան** – Շնորհակալություն խոսք տրամադրելու համար, ես միայն կցանկանայի հիշեցնել նախորդ խորհրդում իմ հնչեցրած առաջարկը, այն է՝ հանդիպել տարվա մեջ երկու անգամ, քանի որ համալսարանականների մոտ կուտակվում են բազում խնդիրներ, որոնք նրանք ցանկանում են հնչեցնել Նախագահի առջև: Ես նույնպես գտնում եմ, որ պետք է հավանություն տալ ռեկտորի հաշվետվությանը, սակայն կցանկանամ հնչեցնել որոշ դիտարկումներ: Ռեկտորը իր ելույթում նշեց, որ ԵՊՀ-ում գործում են տասնյակ կենտրոններ, սակայն անդրադարձավ միայն մի քանիսին: Լավ կլիներ նաև այլ կենտրոնների գործունեության մասին հաղորդում կատարվեր: Կցանկանայի նշել, որ ռեկտորին հաջողվել է ստեղծել այնպիսի մթնոլորտ, որը տարբերում է հ<sup>3</sup>մալսարանը այլ հիմնարկներից: Մենք աշխատանքի ենք գալի հաճույքով և այդ ազատ ակադեմիական մթնոլորտը մեզ համար ամենակարևորն է: Կոռուպցիայի խնդիրը չափազանց ցավոտ հիմնահարց է և ես ձեռնպահ կմնայի ասել, որ համալսարանում առկա է կոռուպցիա, սակայն շատ բացասական եմ գնահատում «դեղին» մամուլում շրջանառվող սխալ տեղեկությունները և եթե մենք ցանկանում ենք պայքարել, ապա պետք է պայքարել կոնկրետ քայլերով: Ի դեպ համալսարանում միշտ եղել է շատ թափանցիկ մթնոլորտ, ուսանողական խորհրդի նախագահի ելույթը խորհելու տեղ տվեց, որովհետև ես նույնիսկ հայտնել եմ իմ անհամաձայնությունը ռեկտորի այն որոշման դեմ, որ թափանցիկության ապահովման նպատակով, նա թույլ է

տվել ուսանողության ներկայացուցիչներին մասնակցել կամայական քննության՝ իրենց ցանկությամբ, որը ես համարում եմ հակականոնադրական: Շնորհակալություն խոսք տրամադրելու համար:

**Ս. Սարգսյան (խորհրդի նախագահ)** - Ես ցանկանում եմ նշել, որ ոչ մի վատ բան չեմ տեսնում այն բանում, որ ուսանողները, դասախոսները, կամ այլ մարդիկ մասնակցեն քննությանը: Ինչպես է լինում, որ ուսանողը իր ցանկությամբ կարող է լսել մի դասախոսի դասախոսություն, և դասախոսը դրանից միայն իրեն լավ է զգում, իսկ երբ գնում, հեռվից դիտում են քննության անցկացումը, դրանից դասախոսը կարող է վատ զգալ: Լեվոն Ներսիսյանը, երբ մեր լսարանում դասախոսություն էր կարդում, ապա լսարանը երկու անգամ մեծանում էր և նույն Ներսիսյանը հրավիրում էր ցանկացած մարդու մասնակցելու քննությանը: Ես դրա մեջ վատ բան չեմ տեսնում: Ես մի բան գիտեմ՝ ինչքան ուսանողությունը լինի ակտիվ, այնքան բուհը կլինի լավը և ոչ ոք չի խրախուսի, որ Ուսանողական խորհուրդը դառնա «ոստիկան», սակայն ուսանողների ակտիվությունը պետք է խրախուսել:

**Հ. Սարգսյան** - Մեծարգո պարոն Նախագահ, հարգելի ռեկտոր, ես կարծում եմ, որ այս հաշվետվությունը ոչ միայն գործունեության գնահատական է, որովհետև վերջին տարվա ընթացքում իսկապես բավարար գործունեություն է իրականացվել, այլև լավ առիթ է համապետական ինչ-ինչ խնդիրներ քննարկելու համար՝ օգտվելով Հանրապետության նախագահի ներկայությունից: Վերջերս մեր Էկոնոմիկայի նախարարը նշեց, որ մեր տնտեսության զարգացման մոդելը արտահանման կողմնորոշում ունենալն է: Արտահանում ասելով միայն չենք հասկանում բնական ռեսուրսները, այլև նկատի ունենք կրթական և այլ ծառայություններ, որի համար պետական լուջ աջակցության կարիք կա: Վերջերս Հնդկաստանում ՀՀ դեսպանի հետ խոսակցության ժամանակ, նա նշեց, որ կա ցանկություն մեծ թվով հնդիկ ուսանողների ուսուցում կազմակերպել Հայաստանում: Մենք անհրաժեշտ ռեսուրսների մի մասի տերն ենք. կան օտար լեզվով բակալավրիատի աստիճանի դասավանդման մակարդակ ունեցող դասախոսներ, սակայն երկրորդ խնդիրը հանրակացարանային խնդրի ապահովումն է, որում մենք կաղում ենք: Եվ այստեղ մենք պետական աջակցության կարիք ունենք:

**Ս. Առաքելյան** - Մեծարգո պարոն Նախագահ, հարգելի ռեկտոր, խորհրդի հարգարժան անդամներ, ակնհայտ է որ յուրաքանչյուր կատարված աշխատանք տալիս է արդյունք: Բարձրագույն դպրոցի գործունեության հիմնական արդյունքը

շրջանավարտներն են: Որքանով են մեր շրջանավարտները այսօր մրցունակ, որքանով են ապահովում ժամանակակից պահանջները, որքանով են ճիշտ կարողանում գտնել իրենց տեղը՝ սա պետք է լինի մեր աշխատանքի հիմնական գնահատականը: Այստեղ կցանկանայի ներկայացնել Մայր բուհի Իջևանի մասնաճյուղի հիմնական ձեռքբերումները, մասնաճյուղ, որի ռազմավարական գոյությունը Տավուշի մարզում ակնհայտ է: Ուղիղ մեկ տարի առաջ ռեկտորի հանձնարարականով մենք կազմեցինք որակի բարձրացման համալիր ծրագիր, որն անմիջապես կյանքի կոցվեց: Առաջինը մասնաճյուղի ուսումնական գործընթացում էլեկտրոնային համակարգի ներդրումն էր, որն այսօր լիարժեք գործում է: Մասնաճյուղում մեկ տարուց ավելի է յուրաքանչյուր ընթացիկ քննությունից հետո եռօրյա, իսկ հանրագումարայինից հետո մեկօրյա ժամկետում արդյունքները փակցվում են: Մեր շրջանավարտներից ավելի քան 350-ը աշխատում են մարզի հանրակրթական դպրոցներում: Օգտվելով առիթից կցանկանայի բարձրացնել երկու հարց՝ դիմելով ՀՀ Կրթության և գիտության նախարարին: Առաջին հարցս հետևյալում է, բարձրագույն ուսումնական հաստատությունների մասնագիտությունների ցանկում ընդունելության քննություններում հիմնականում օտար լեզվի փոխարեն, ըստ ցանկության, թույլատրվում է հանցնել ռուսաց լեզու: Սակայն կան 14 մասնագիտություններ, որոնցում կա արգելք ռուսաց լեզուն որպես օտար հանձնելու հարցում: Կարծում եմ, նկատի ունենալով մեր հանրակրթական դպրոցներում օտար լեզվի ուսուցման արդի վիճակը, կխնդրեի, որ թույլ տրվեր բոլոր մասնագիտությունների դեպքում դիմորդներին հնարավորություն տրվել օտար լեզվի փոխարեն հանձնել ռուսաց լեզու: Հաջորդ հարցը, որին կցանկանայի անդրադառնալ վերաբերում է բուհական համակարգի ոչ թե կրթության, այլ դաստիարակության գործառնություն: Կարծում եմ, որ բուհական ծրագրերում որոշակի փոփոխություններ պետք է իրականացնել դասավանդվող առարկաների հետ կապված դաստիարակության գործառնության արդյունավետ իրականացման համար: Կարծում եմ, որ պետական քննությունների շարքում պետք է ավելացվի ևս մեկ առարկա քաղաքացիական դաստիարակության կոնտեքստում, որպեսզի բուհի շրջանավարտը տիրապետի իր երկրի սահմանադրությանը, հիմնական օրենքներին, որը հնարավորություն կտա շրջանավարտին, ցանկության դեպքում, անմիջական մասնակցել քաղաքացիական ծառայողի համար անցկացվող մրցույթներին:

Ավարտելով խոսքս՝ կցանկանայի շնորհակալությունս հայտնել Ձեզ՝ պարոն Նախագահ, հանրակրթական դպրոցներին Ձեր ցուցաբերած ուշադրության համար:

**Ս. Սարգսյան (խորհրդի նախագահ)** - Ես կարծում եմ, որ ռուսերենը բոլոր մասնագիտությունների գծով պետք է համարվի օտար լեզու: Եվ չպետք է, օրինակ,

իսպաներենը համարենք ավելի առաջնային, քան ռուսերենը: Այսօր մեր ապրանքաշրջանառության վաթսուն տոկոսը կապված է Ռուսաստանի հետ և ռուսերենի իմացությունը պետք է կարևորել: Ռուսերենը պետք է հավասար համարել օտար լեզու, եթե որոշ մասնագիտությունների գծով անհրաժեշտություն կա երկրորդ օտար լեզվի իմացություն, ապա դրանք կարող են լինել ցանկացած օտար լեզուներ՝ այդ թվում և ռուսերենը: Եվ ես կարծում եմ, որ պարոն Աշոտյանը, պետք է անհրաժեշտ քայլերը կատարի այդ խնդիրը լուծելու համար:

**Ռ. Ավագյան** - Մեծարգո պարոն Նախագահ, հարգելի ռեկտոր, խորհրդի հարգարժան անդամներ և հրավիրվածներ: Նախ համարում եմ, որ ռեկտորի աշխատանքը պետք է գնահատել բավարար: Տարբեր ֆակուլտետներում ուսուցիչները ավագ դպրոցի աշակերտներին բերում են մասնագիտական կողմնորոշման համար: Եվ ուսուցիչներից մեկը, որը մեր 25 տարվա շրջանավարտն էր, նկատեց, որ իրենք նույն լաբորատոր սարքերի վրա են փորձեր կատարել: Ի ուրախություն մեզ այսօր մենք արդեն ունենք նոր սարգավորումներ և առաջին և երկրորդ կուրսերի լաբորատոր պարապմունքների խնդիրները լիովին լուծված են: Եվ մենք ապագայում արդեն խնդիր կունենանք մագիստրատուրայի համար համապատասխան լաբորատոր սարքերի ձեռքբերման և ցանկանում եմ դրա համար շնորհակալություն հայտնել:

**Ս. Սարգսյան (խորհրդի նախագահ)** - Ես պետք է նշեն, որ ծրագիրը նախատեսված է երեք տարվա համար և առաջիկայում դեռ նոր սարքավորումներ Դուք կստանաք: Սրանով ավարտենք ելույթները օրակարգի այս հարցի շուրջ: Ես նույնպես ցանկանում եմ նշել, որ համալսարանում որոշակի աշխատանք է կատարվել այս տարվա ընթացքում, սակայն ուզում եմ ավելացնել, որ հավանական է որ այս կազմով Խորհուրդը կարող է այլևս չհավաքվել և ուզում եմ նշել, որ Խորհուրդն էլ որոշակի աշխատանքեր իրականացրել է: Իհարկե, իրավիճակը չի կարելի համարել լավ, իրավիճակը չի կարելի համարել այնպիսին, որին մենք ձգտում ենք և ես համոզված եմ, որ դեռևս տարիներ է տևելու, որպեսզի մենք կարողանանք հպարտանալ Երևանի պետական համալսարանում տրված գիտելիքների մակարդակով: Շատ քիչ է լինել առաջատարը հանրապետությունում: Եթե մենք համենատվում ենք հանրապետության այլ բուհերի հետ, ես չեմ կարծում, որ դա ճիշտ մոտեցում է, եթե մենք փորձում ենք համենատվել Թուրքմենստանի, Ղազախստանի համալսարանների հետ, սա էլ այնքան մեծ չափանիծ չէ: Ես կարծում եմ, որ մենք պետք է կարողանանք միջին Եվրոպական չափանիշների հետ և երբ կարողանանք ասել, որ կարողանում ենք այդպիսի կրթություն

տալ, այն ժամանակ, մենք մեր արածից կարող ենք բավարարվել: Սա ամենևին չի նշանակում, որ ոչինչ չի արվել և որևէ տեղաշարժ չկա: Ես դա տեսնում եմ և դա արդեն լավ է: Բոլոր գործերի համար անհրաժեշտ է սկիզբ, և ես ուրախ եմ, որ հնարավոր է եղել լուծել նաև սոցիալական խնդիրներ: Ուրախ եմ, որ 2011 թվականը Երևանի պետական համալսարանի 315 ընտանիքներ կարող են ասել, որ արդեն ունեն սեթական բնակարան, որի առաջին շնորհիքը իրենցն է, որ կարողացան մասնակցել, հավատալ մեր գաղափարին և համատեղ իրականացնել այդպիսի ծրագիր: Այդ ծրագրերը շարունակվում են արդեն ոչ միայն համալսարանի, այլ հանրապետության մակարդակով, տարբեր մասնագիտությունների հետ կապված և պատրաստ ենք լինելու, եթե Երևանի պետական համալսարանը, համալսարանի դասախոսական կազմը, ուսանողները կարիք ունենա նոր այդպիսի ձեռնարկի, մենք պատրաստ ենք աջակցել: Ամենայն անկեղծությամբ ասում եմ, որ պատրաստ ենք մեր ջանքերը ավելացնել կահավորելու համալսարանի լաբորատորիաները և եթե տեսնենք, որ արդյունք կա և դա ձև չի, ապա ավելացնելու ենք այդ աջակցությունը:

Ցանկանում եմ նաև անդրադառնալ կոռուպցիայի և կաշառակերության խնդրին և կոչ եմ անում ձեզ սատարել մեզ, սատարել, որովհետև դա այնպիսի պայքար է, որ զուտ միայն ցանկությամբ, նույնիսկ ամենաբարձր պաշտոնյան այս խնդիրը չի կարող լուծել, այստեղ անհրաժեշտ է հասարակական աջկցություն: Բայց ամենից անհրաժեշտը գիտակցումն է՝ կա՞ այդ երևույթը, թե՞ ոչ: Որևէ մեկը հաճույքով չի ընդունում, որ իր ղեկավարած նախարարությունում, իր ղեկավարած կազմակերպությունում կարող է լինել կոռուպցիա: Եթե մարդ ի վիճակի չէ գիտակցելու, ապա որևէ պայքարի կամ բարեփոխման ակնկալիք մենք ունենալ չենք կարող: Ցանկացած հիվանդություն կարող ես բժշկել, եթե կարողանում ես նորմալ փստորոշել: Բոլորիդ կոչ եմ անում ակտիվ լինել: Իմ ելույթը չի նշանակում, որ մենք ձևականորեն գտնելու ենք պաշտոնյաներ, պատժելու ենք նրանց: Իմ ասածը պարզ է և հստակ. այս երևույթը կա, այս երևույթը խանգարում է մեր առաջընթացին, ամենից մեծ խոչընդոտն է և դրա դեմ պետք է պայքարել: Մեր զարգացման ճանապարհը էվոլուցիոն է և մենք հեղափոխություններ անելու մտադրություն չունենք:

*Ելույթներից հետո ԵՊՀ խորհրդի նախագահը առաջարկեց քվեարկության միջոցով ընդունել համապատասխան որոշում օրակարգի առաջին հարցի վերաբերյալ.*

1. Հաստատել ԵՊՀ ռեկտորի հաշվետվությունը ԵՊՀ 2009/2010 ուսումնական տարվա գործունեության վերաբերյալ և այն գնահատել բավարար:

Կողմ՝ 59, Ղեմ՝ 0, Ձեռնպահ՝ 0:

**2. ԵՊՀ 2010թ. եկամուտների և ծախսերի կատարողականի (հունվար-նոյեմբեր) հաստատում:**

*Ձեկ. ԵՊՀ ռեկտոր Արամ Սիմոնյան*

**Ա. Սիմոնյան** - Խորհրդի մեծարգո՝ Նախագահ, Խորհրդի հարգարժան անդամներ, Ձեր ուշադրությանն են ներկայացնում «Երևանի պետական համալսարան» ՊՈԱԿ-ի 2010 թվականի հունվար-նոյեմբեր ամիսների եկամուտների և ծախսերի կատարողականը: Տասնմեկ ամսվա ընթացքում ճշտված նախահաշվի եկամուտները հավաքագրվել են և պլանային ցուցանիշների նկատմամբ կազմվել են 96,6%: Եկամուտի գերակշիռ մասը կազմող վճարովի ուսուցման ծառայությունները դեկտեմբերի 1-ի դրությամբ հավաքագրվել են 99%-ով և հաշվի առնելով դեռ չվճարված ուսման վարձերը կարելի է ասել, որ նախատեսված պլանային ցուցանիշը կգերակատարվի տարեկան կտրվածքով և նախատեսված պահուստային ֆոնդը չի օգտագործվի: Դա պայմանավորված է ընդունելության ցուցանիշները գերազանցելու հետ և առկա, և հեռակա համակարգերում բակալավրիատի և մագիստրատուրայի կրթական աստիճաններում: Առկա ուսուցման միջին ուսման վարձը բակալավրիատում կազմել է 355 հազար դրամ: Գործանական այլ եկամուտների ցուցանիշը կազմել է 80% նախատեսվածի նկատմամբ, ինչը կարելի է դրական գնահատել, քանի որ Հյուրերի տան և Ծաղկածորի ուսումնաարտադրական բազայի եկամուտների զգալի մասը հավաքագրվում է դեկտեմբեր ամսին՝ ելնելով նախորդ տարիների կատարողական ցուցանիշներից: Ոչ գործառնական եկամուտները գերակատարվել են հիմնականում դրամաշնորհային ծրագրերով, ինչպես նաև բանկում ավանդ ձևակերպված միջոցներից ստացվող տոկոսներից: Ծախսերի կատարողականը նախատեսվածի նկատմամբ կազմել է 86,4% և հաշվի առնելով, որ ծախսերի գերակշիռ մասը կազմող աշխատանքի վարձատրության ծախսերը դեկտեմբերի ամսին կատարվում է կրկնակի չափով, ապա մնացած ծախսերի կատարողականը կազմել է 90,5%: Ծախսերը նախատեսված ցուցանիշների նկատմամբ գերակատարվել են վեցը հոդվածներով, որոնցից երեքը թույլատրելի տասը տոկոսի սահմաններում է, իսկ մնացած երեք հոդվածներից խոշորը վերաբերվում է ոչ ընթացիկ ակտիվների ձեռքբերման հոդվածին, այն պայմանավորված է արդեն վերը նշված լաբորատոր սարքավորումների ձեռքբերման հետ: Մյուսները դրամաշնորհային և անդամավճարների հետ կապված ծախսերն են: Ստորաբաժանումների ծախսերը ևս տասնմեկ ամսվա կտրվածքով կատարվել են նախատեսվածով: Կառուցվածքային

ստորաբաժանումների նախատեսված եկամուտները չեն կատարել Բյուրականի և Հանքավանի ուսումնարտադրական բազաները, իսկ գերակատարել են ատամնաբուժարանը և հոգեբանության կենտրոնը:

Դիմում են խորհրդի անդամներին հաստատելու ֆինանսական տարվա տասնմեկամսյակի կատարողականը:

*Ելույթից հետո հայտարարվեց հարցերի հերթագրում:*

Գրանցվեց Կ. Խաչատրյանը:

**Կ. Խաչատրյան** - Ըստ Համալսարանի խորհրդին ներկայացված տարեկան ծախսերի կատարողականների 2007-10 թվականների ընթացքում թիվ 5 մասնաշենքի՝ կենսաբանական ֆակուլտետի մասնաշենքի հիմնանորոգման նպատակով ծախսվել է շուրջ 534 միլիոն դրամ: Իսկ առաջիկա տարում նախատեսվում է ծախսել ևս 30 միլիոն: Ներկայումս Հանրապետության Նախագահի հովհանու ներքո իրականացվում է բնակարանաշինության ծրագիր, որի շրջանակներում կառուցվող բնակելի շենքում մեկ քառակուսի մետր բնակմակերեսի արժեքն է 170 000 դրամ: Ի դեպ ապահովված է բաժր որակ, օդափոխության, ջեռուցման և այլ կոմունիկացիաները, վերելակները և այլն: Պարզ է, որ ուսումնական մասնաշենքերի կառուցման արժեքը ավելի ցածր պետք է լինի: Պարզ հաշվարկի արդյունքում կարող ենք տեսնել, որ միայն կենսաբանականի համար ծախսված միջոցների հաշվին, օգտագործելով նշված 534 միլիոն դրամը, կարող էինք կառուցել շուրջ 4 000 քառակուսի մետր մակերեսով նոր մասնաշենք՝ գրեթե այնքան որքան վերանորոգված կենսաբանականի շենքն է:

Ավելին՝ 2007-11 թվականների ընթացքում հիմնանորոգման ծախսերի հոդվածով կծախսվի շուրջ 2 միլիարդ դրամ: Նույն հաշվարկով այսքան գումարով կկառուցեինք մոտ 13000 քառակուսի մետր մակերեսով նոր մասնաշենքեր:

Չեք կարծում, որ որդեգրված հիմնանորոգման ռազմավարությունը արդյունավետ չէ:

**Ա. Սիմոնյան** - Ոչ, չեն կարծում, որովհետև նոր շենք սարքելը ավելի էժան է, քան հինը վերակառուցելը, նամանավանդ այն շենքը, որը Չարենցի փողոցի վրա է գտնվում: Այն կառուցվել է 1954 թվականին և երբեք կապիտալ վերանորոգման չի ենթարկվել: Նրա միջհարկային ծածկերը ամբողջովին բաղդադից էին, որը վերանորոգել հնարավոր չէր և մենք ստիպված էինք դրանք նորից երկաթբետոնե կոնստրուկցիաներով կառուցել: Մեր շինարարության բոլոր նախահաշիվները ստուգվել են ինչպես համապատասխան մարմինների, այնպես էլ աուդիտի միջոցով:

Եթե խորհուրդը անհրաժեշտություն կզգա նորից ստուգել, ես պատրաստ եմ այդ բոլորը ներկայացնել խորհրդի հետազոտմանը: Այն շինարարները, որոնք իրականացրել են շինարարական աշխատանքները օգտվում են մեր վստահությունից և հայտնի ընկերություններ են: Չեմ կարծում, որ մեր շինարարական ծախսերը գերաժախտվ են եղել, այլ, ընդհակառակը, կարծում եմ, որ անցած տարիների ընթացքում մեծ և արդյունավետ շինարարական աշխատանք ենք կատարել, հիմա էլ շարունակում ենք՝ մասնավորապես յոթերորդ մասնաշենքում և հաջորդ տարվա համար, ցավոք սրտի, մեր շինարարության նախահաշվի նախագիծը ներկայացրել ենք երկու անգամ քիչ, որովհետև այդպիսին են լինելու մեր հնարավորությունները և դրանք ուղղվելու են յոթերորդ մասնաշենքի վերանորոգմանը:

**Ս. Սարգսյան (խորհրդի նախագահ)** - Շատ լավ, սակայն ես չգիտեմ, թե ով է ձեզ նման տեղեկատվություն տվել, որ վերանորոգումը կարող է ավելի թանկ արժենալ, քան նոր շինարարությունը և ով, որ Ձեզ դա ասել է, ստել է կամ էլ չի հասկանում շինարարությունից: Այդպիսի բան չի կարող լինել: Մեր պայմաններում չի կարող լինել, եթե իհարկե խոսքը Կրեմլի վերանորոգման մասին է, ապա որոշակի խնդիրներ կարող են առաջանալ: Եվ հարցը նախահաշիվ ներկայացնելը չէ, հարցը՝ հայտարարություն կատարելն է: Երբ հայտարարություն եք անում լսարանի առջև, լսարանը պատկերացում է կազմում մարդու գիտելիքների մասին տվյալ բնագավառում: Սա է ամբողջ խնդիրը, իսկ ինչ վերաբերվում է ստուգելուն, լավ կլինի ստուգենք և վերջացնենք: Եվ խորհուրդը կլինի հանգիստ, և ուսանողները, և Դուք հանգիստ կլինեք: Եվ դա կանենք, որևէ խնդիր չեմ տեսնում:

Եթե հարցեր չկան անցեք օրակարգի երրորդ հարցին:

### **3. ԵՊՀ 2011թ. ֆինանսական տարվա եկամուտների և ծախսերի նախահաշվի հաստատում:**

*Ձեկ. ԵՊՀ ռեկտոր Արամ Սիմոնյան*

**Ա. Սիմոնյան** – Թույլ տվեք ձեզ ներկայացնել Երևանի պետական համալսարանի 2011թ. ֆինանսական տարվա եկամուտների և ծախսերի նախահաշիվը: Նախատեսվում է, որ նախահաշիվը կլինի հավասարակշռված և մեր նախահաշիվը կազմում է 7,6 միլիարդ դրամ: Եկամուտները նախորդ տարվա նկատմամբ ավելանում են 6,5%-ով, իսկ ծախսերը 3,5%-ով: Նախահաշվի մուտքերը նախատեսում ենք ավելացնել 467 միլիոն դրամով, որը նախատեսվում է վճարովի ուսուցման ծառայության, պետական բյուջեից ստացվող ֆինանսավորման և գործառնական այլ

եկամուտների հաշվին: Ծախսերը ավելանալու են 361 միլիոն դրամով: Այստեղ թվով 15 հողվածների ցուցանիշներ են ավելանում, իսկ ծախսերի յոթ հողվածներ նվազում են: Ավելանալու է աշխատանքի վարձատրության ծախսը: Պետք է նշեն, որ մենք Գիտական խորհրդում խոսել ենք դրա մասին և բոլոր աշխատողների աշխատավարձերը ավելանալու են 5 հազար դրամով: Մենք նաև շարունակելու ենք պահպանել տարբերակված աշխատավարձի հավելավճարները՝ երեք մակարդակներով: Հիշեցնեմ նաև, որ լրավճարներ են նախատեսվում հեռակա ուսուցումից, որից ստացված գումարների 50%-ը տնօրինում է ֆակուլտետը և վճարում է դասախոսներին: Վճարումները պետական բյուջե նվազում են 40 միլիոնով, որը պայմանավորված է աշխատավարձի ֆոնդի բարձրացման հետ և նախատեսվում է ավելացնել կոմունալ ծախսերը 24,8 միլիոնով: Ավելացել են տրանսպերտային ծախսերը՝ պայմանավորված պրակտիկաների ավելացման հետ: Կրճատել ենք ներկայացուցչական ծախսերը 5 միլիոն դրամով: Կրկնակի չափով ավելացրել ենք գործուղման ծախսերը, որը բացատրվում է նրանով, որ ավելացել են դրամաշնորհային ծրագրերով գործուղումները, ինչպես նաև Գիտության պետական կոմիտեն տրամադրելու է հավելյալ գումարներ գործուղումների համար: Ավելացել են նպատակային ֆինանսավորման ծավալները 43 միլիոն դրամով, ինչպես նաև համաֆինանսավորման ծախսերը: Բավականին կրճատվել են հիմնանորոգման ծախսերը: Այսպիսով մեր ծախսերի 83,5%-ը կազմում են պարտադիր ծախսերը և 16,5% կազմակերպության զարգացման ծախսերը:

Շնորհակալություն:

*Ելույթից հետո հայտարարվեց հարցերի գրանցում:*

Գրանցվեցին Ա. Աշոտյանը, Վ. Վարազյանը, Ա. Մկրտիչյանը:

**Ա. Աշոտյան** – Իմ դիտարկումը ոչ այնքան հարց է, որքան Բարձրագույն կրթության օրենքում փոփոխության պարտադիր պայման: Բոլոր բուհերի բյուջեներում պարտադիր պետք է նշվի ուսանողական ինքնակառավարման մարմինների գործունեության ծախսերը, որը պետք է նշված լինի, ոչ թե միայն ուսանողական միջոցառումների ծախսեր, այլ պետք է ֆինանսավորվի Ուսանողական խորհրդի գործունեությունը՝ առանձին տողով:

**Ա. Սիմոնյան** - Մեզ մոտ առանձին տողով տրվում է ոչ միայն Ուսանողական խորհրդի, այլև Ուսանողական գիտական ընկերության ծախսերը: Միայն մեկ տող մենք չենք առանձնացրել, որի շուրջ չեկանք ընդհանուր հայտարարի՝ խոսքը Ուսանողական

խորհրդի գործուղումների մասին է, որը մենք առանձին տողով չենք ներկայացրել: Մենք կարծում ենք, որ դա կարելի է իրականացնել ուսանողական գործուղումների սահմաններում:

**Վ. Վարազյան** – Պարոն Սիմոնյան հարցս վերաբերվում է Բարեգործական եկամուտներին: Անցած տարի նախատեսված 20 միլիոնից կատարվել է ընդամենը 34,2%-ը: Այս տարի նախատեսվում է 110 միլիոն: Եթե հնարավոր է, նշեք, թե որտեղից է ստացվել նախորդ տարվա եկամուտը և որտեղից է ակնկալվում այս տարվա եկամուտը:

**Ա. Սիմոնյան** - Արդեն նշեցի, որ հարյուր միլիոնը ստացվելու է լաբորատոր սարքավորումների ձեռքբերման համար: Իսկ նախորդ տարվա նախատեսվածը չի կատարվել ֆինանսական ճգնաժամի պատճառով: Օրինակ, Իզմիրյան հիմնադրամը չի տրամադրել նախատեսված գումարները, ինչպես նաև ԵՊՀ բարեկամների միությունը ամբողջ չափով չի տրամադրել բանկում գտնվող գումարների սահմանված տոկոսները: Ինչպես նաև մենք խնդիրներ ունենք ԵՊՀ բարեկամների միության հետ բանկում գտնվող մայր գումարի կառավարման հետ:

**Ս. Սարգսյան (խորհրդի նախագահ)** – Պարոն Սիմոնյան, ես առաջարկել եմ և կրկնում եմ, պայմանավորվեք և այդ գումարը տեղափոխեք Հայաստանի բանկեր: Ես Ձեզ երաշխավորում եմ կրկնակի շահութաբերություն: Ինչո՞ւ եք եք այնտեղ պահում: Ակնհայտ չէ, որ այնտեղի տոկոսները անհամեմատ ցածր են: Մենք պատրաստ ենք տալ պետական երաշխավորագիր, որ այդ գումարները երբեք չեն ծախսվի, չեն կորչի:

**Ա. Սիմոնյան** – Հարցը նրանում է, որ ըստ կտակողների ցանկության, մենք իրավունք չունենք տեղաշարժելու այդ գումարը: Ես մեկ անգամ խոսել եմ և ևս մեկ անգամ կխոսեմ:

**Ա. Մկրտիչյան** – Համալսարանը զգալի ֆինանսական աջակցություն է ստանում պետական բյուջեից և միևնույն ժամանակ նաև ինչ-որ չափով խոշոր հարկատու է: Եվ այդ ստանալ-տալ ճանապարհին առաջանում են տրանսֆերային ծախսեր: Հնարավոր չէ մշակել մեխանիզմ, այդ կորուստները չկորցնելու և միջոցներ խնայելու համար:

**Ս. Սարգսյան (խորհրդի նախագահ)** – Այդ հարցը ավելի շուտ ինձ է ուղղված, քան թե ռեկտորին: Եվ մենք չենք կարող երկրում ունենալ շահույթ հետապնդող

կազմակերպություն, որն ունենա հարկային արտոնություններ: Մեր երկիրն արդեն անցել է այդ հաշվանցման այդ փուլը, որը կոռուպցիոն ամենամեծ ռիսկերն են: Պետք է առաջանան տասնորդական տոկոսով գործառնական ծախսեր, որոնցից խուսափելը անիմաստ է: Այլ հարցեր կա՞ն:

*ԵՊՀ խորհրդի նախագահը առաջարկեց քվեարկության միջոցով ընդունել համապատասխան որոշումներ օրակարգի երկրորդ և երրորդ հարցերի վերաբերյալ.*

Հավանություն տալ Երևանի պետական համալսարանի 2010 թվականի (հունվար-նոյեմբեր) եկամուտների և ծախսերի կատարողականին և այն գնահատել բավարար:

Կողմ` 59, Դեմ` 0, Ձեռնպահ`0:

Հաստատել Երևանի պետական համալսարանի 2011թ. ֆինանսական տարվա եկամուտների և ծախսերի նախահաշիվը (բյուջե)` համաձայն հավելվածի: Հանձնարարել ԵՊՀ ռեկտորին 2011թ. ծախսերը կատարել հաստատված բյուջեին համապատասխան:

Կողմ` 59, Դեմ` 0, Ձեռնպահ`0:

#### **4. «Երևանի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության (նոր խմբագրությամբ) նախագծի հաստատում:**

*Ձեկ. ԵՊՀ ռեկտոր Արամ Սիմոնյան*

**Ա. Սիմոնյան** – Խորհրդի մեծարգո՝ Նախագահ, խորհրդի հարգարժան անդամներ, Ձեր ուշադրությանն եմ ներկայացնում «Երևանի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության նոր խմբագրության նախագիծը: Այդ նախագիծը կազմելու համար ստեղծվել է հանձնաժողով, որը տարվա ընթացքում աշխատել է և կազմել այն: Նախ նշեմ, որ այս նախագծի անհրաժեշտությունը պայմանավորված է մի քանի գործոններով: Դրանցից առաջինն այն է, որ ԵՊՀ գործող կանոնադրությունը հաստատվել է ՀՀ Կառավարության 2005թ.-ի հոկտեմբերի 13-ի որոշմամբ և այս ընթացքում իրականացվել են բազում օրենսդրական փոխփոխություններ և անհրաժեշտ է ԵՊՀ կանոնադրությունը համապատասխանեցնել գործող օրենսդրությանը:

**Ս. Սարգսյան (խորհրդի նախագահ)** – Պարոն Սիմոնյան, ես առաջարկում եմ այս օրակարգի այս հարցը քննարկել հացուպատասխանի միջոցով: Եթե կան տարակարծություններ, առաջարկում եմ քննարկել միայն դրանք, իսկ մնացած փոփոխությունները, բոլորս էլ հասկանում ենք, բխել են միայն անհրաժեշտությունից:

*Հայտարարվեց հարցերի գրանցում:*

*Գրանցվեցին Յ. Ակուայանը, Վ. Դումանյանը, Հ. Սարգսյանը, Ա. Ավետիսյանը:*

**Յ. Ակուայան** – Շնորհակալություն: Մենք մեր առաջարկությունները գիտական խորհրդի ժամանակ բարձրաձայնել ենք, դրանցից մի քանիսը ընդունվել են, իսկ մնացածի մասին կցանկանայի բարձրաձայնել այստեղ: Համալսարանի կառավարմանը վերաբերվող բաժնի 15-րդ հոդվածում նշվում է, որ «խորհրդի անդամներից 18-ը ֆակուլտետների և մասնաճյուղերի պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչներ են, ովքեր առաջադրվում են նույն ստորաբաժանումների կողմից, իրենց կանոնադրությամբ սահմանված կարգով»: Առաջարկում եմ, որպեսզի թեկնածուներ կարողանան ներկայացնել նաև համալսարանի այլ ստորաբաժանումներ, որպեսզի չոտնահարենք համալսարանի այլ աշխատակիցների իրավունքները: Երկրորդ առաջարկը վերաբերվում է ԵՊՀ կառավարմանը ուսանողների մասնակցությանը: Կանոնադրության նախագծի 26-րդ հոդվածի երկրորդ պարբերությունում նշվում է, որ «Ֆակուլտետի խորհրդի անդամների թվի տասից քսանհինգ տոկոսն ուսանողներն են, որոնց առաջադրումն ու ընտրությունն իրականացնում է ֆակուլտետի ուսանողական խորհուրդը»: Սակայն բարձրագույն կրթության մասին օրենքը սահմանում է, որ ֆակուլտետի խորհուրդը համալսարանի կառավարման մարմին է և որ կառավարման մարմիններում ուսանողների մասնակցությունը իրականացվում է առնվազն 25%-ով: Սակայն նախագծում առաջարկվում է 10-25%, որը հակասում է համապատասխան օրենքներին: Շնորհակալություն առաջարկները լսելու համար:

**Ա. Սիմոնյան** - Ես փորձեմ պատասխանել: Կրթության մասին օրենքում կա ուսումնական հաստատությունների կառավարման մարմինների ցանկը: Հոդված 40-ի 4-րդ կետում նշվում է, որ դրանք են հոգաբարձուների խորհուրդը, խորհուրդը, ընդհանուր ժողովը, գիտական խորհուրդը, մանկավարժական խորհուրդը, գործադիր մարմինը: Այստեղ ֆակուլտետային գիտական խորհուրդների մասին որևէ խոսք չկա: Ինչ վերաբերվում է դեկանի ընտրությանը, ապա դա կատարվում է ֆակուլտետի մեծ

խորհրդում, որում ուսանողները ունեն 25% մասնակցություն: Ֆակուլտետի գիտական խորհուրդը կառավարման մարմին չէ և դրա համար մենք մասնակցության չափը թողել ենք ֆակուլտետի հայեցողությանը՝ նշելով նվազագույնը և առավելագույնը: Մյուս հարցի կապակցությամբ նշեմ, որ մենք ունենք քսան ֆակուլտետ և մեկ մասնաճյուղ, ապա բնականաբար հարմար ենք համարել, որ թեկնածություններ առաջարկեն հիմնականում այդ ստորաբաժանումները: Գտնում ենք, որ եթե չենք կարողանում ապահովել բոլոր ֆակուլտետներին, ապա այլ ստորաբաժանումների մասին խոսելը ավելորդ է:

**Ս. Սարգսյան (խորհրդի նախագահ)** – Ցուլակի ասածում կա տրամաբանություն, այն է մի սահմանափակեք բոլոր ստորաբաժանումների աշխատակիցների համալսարանի կառավարմանը մասնակցելու իրավունքը, սակայն ընտրության ժամանակ գիտական խորհրդում առավելությունը տվեք ֆակուլտետներին: Ցուլակի առաջարկությունը սա է, պարոն Սիմոնյան:

**Ա. Սիմոնյան** - Ես դեմ չեմ և չեմ կարծում որ դա սկզբունքային հարց է: Մենք առաջնությունը տվել ենք ֆակուլտետներին, սակայն եթե խորհուրդը գտնում է, որ պետք է այդպես վարվել, ես խնդիր չեմ տեսնում:

**Ս. Սարգսյան (խորհրդի նախագահ)** – Այո, դա սկզբունքային չէ և կարող ենք գրել, որ 18-ը ֆակուլտետների, մասնաճյուղերի և այլ ստորաբաժանումների ներկայացուցիչներ են:

**Ց. Ակուլայան** – Թույլ տվեք ուսանողների 25% մասնակցության հարցի մասին օրենքի պարզաբանման համար դիմել Կրթության և գիտության նախարարին: Ուղղակի մենք տեղյակ ենք, որ տարբեր բուհերում ֆակուլտետների կառավարման մարմիններում 25%-ը ուսանողներ են:

**Ս. Սարգսյան (խորհրդի նախագահ)** – պարոն Սիմոնյան, որպեսզի շատ ժամանակ չծախսենք, ես հարց ունեմ Ձեզ: Ֆակուլտետը համալսարանի մանրակե՞րտն է, թե՞ ոչ: Եթե այո, ապա մեր խորհրդի 25%-ը ուսանողներ են, ճիշտ է՞: Հիմա ֆակուլտետի այսպիսի խորհրդի 25%-ը ուսանողներ պետք է՞ լինեն, թե ոչ, թե միայն 10-25%-ը: Եթե 10-25%, ապա ես դա համարում եմ մեր պայմանավորվածության խախտում: Ուրեմն պետք է լինի 25%:

**Վ. Դումանյան** – Մենք պարոն Սիմոնյանին տվել ենք բազմաթիվ առաջարկներ, սակայն այստեղ ևս մեկ հարց ծնվեց՝ խմբագրական և ըստ էության: 15-րդ հոդվածի յոթերորդ կետում նշված է, որ «ԵՊՀ խորհուրդը հաստատում է իր աշխատակարգը, ռեկտորի ընտրությունների ընթացակարգը»: Սակայն մինչ այդ գրված է, որ այդ խորհուրդը ընտրում է և ԵՊՀ ռեկտորին և մասնաճյուղի տնօրենին, հետևաբար, պետք է գրել, որ հաստատում է նաև մասնաճյուղի տնօրենի ընտրության ընթացակարգը: Ինչպես նաև 38-րդ հոդվածում սահմանափակված չէ գիտահետազոտական ինստիտուտի գիտական խորհրդի կազմի թվաքանակը: Առաջարկում են դա ևս սահմանել: Ինչպես նաև կանոնադրությունում տրվում է բոլոր ստորաբաժանումների մանրամասն կառուցվածքը, սակայն 40-րդ հոդվածում նշվում է միայն ԵՊՀ Կենտրոնի սահմանումը և չկա այլ բացատրություն և դա տրված է Գիտական խորհրդին:

**Ա. Սիմոնյան** – պարոն Դումանյան, ես չեմ կարծում, որ դա պետք է գրել կանոնադրությունում և յուրաքանչյուր ինստիտուտի համար դա կհաստատվի սեփական կանոնադրության համաձայն: Ինչպես նաև չեմ կարծում, որ Կենտրոնների գործունեության կարգը պետք է սահմանվի կանոնադրությամբ, այլ ճիշտ է դա վերապահել գիտական խորհրդին:

**Ս. Սարգսյան (խորհրդի նախագահ)** – պարոն Դումանյան, ես կարծում եմ, որ նման հարցեր ճիշտ է վերապահել գիտական խորհրդին և այնտեղ Դուք կարող եք քննարկել և որոշումներ ընդունել այդ հարցերի վերաբերյալ, և դա խորհուրդի խնդիրը չէ: Եվ եթե Ձեր առարկությունը խիստ սկզբունքային է, ապա կարող ենք կրճատել նաև այլ ստորաբաժանումների կառուցվածքների նկարագրությունները և ևս ֆիքսել, որ դա որոշվում է գիտական խորհրդում և Դուք այնտեղ կարող եք հանգիստ քննարկել այդ հարցերը:

**Հ. Սարգսյան** - Ես մտածում էի բարձրացնել այս հարցը, թե՛ ոչ: Այն կարող է հակասություններ առաջացնել այլ օրենքների հետ, սակայն հաշվի առնելով համալսարանի հատուկ կարգավիճակի մասին որոշումը, գուցե կարելի է՞ այս փաստաթղթում նաև ամրագրել ՀՀ նախագահի կողմից ռեկտորի նշանակման փաստը:

**Ս. Սարգսյան (խորհրդի նախագահ)** - Ես կարծում եմ, որ դա ճիշտ չէ: Ընտրությունը առավել ճիշտ ճանապարհ է:

**Ա. Ավետիսյան** – Պարոն Սիմոնյան, ձեռնարկատիրական գործունեության տեսակների մեջ թվարկված են գործնականում հնարավոր բոլոր կրթական ծրագրերը՝ բարձրագույն, միջին, հետբուհական, հանրակրթական: Ցանկություն ունե՞ք նաև հանրակրթություն և միջին մասնագիտական կրթություն իրականացնել համալսարանում:

**Ա. Սիմոնյան** - Նման ծրագրեր կան, սակայն դրանք դեռ ապագայում են պլանավորվում: Դա նախ և առաջ կապված է ավագ դպրոց կամ քոլեջ ունենալու հետ:

**Ս. Սարգսյան (խորհրդի նախագահ)** - Եթե այլ հարցեր չկան, առաջարկում եմ ընդգրկել հնչած և ընդունված առաջարկությունները և քվեարկել այս նախագծի համար և ընդունել որոշում, այն է.

Հաստատել «Երևանի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության (նոր խմբագրությամբ) նախագիծը՝ համաձայն հավելվածի: Առաջարկել Հայաստանի Հանրապետության կառավարությանը, սահմանված կարգով ընդունելու «Երևանի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը (նոր խմբագրությամբ):

Կողմ՝ 59, Դեմ՝ 0, Ձեռնպահ՝ 0:

### ***5. Ընթացիկ հարցեր***

Նախագահությունը ընթացիկ հարցերի վերաբերյալ առաջարկություններ չներկայացրեց:

Ուսանողների կողմից հնչեց առաջարկություն ԵՊՀ ռեկտորին վերանայել ոչ աշխատանքային ժամերին և շաբաթ ու կիրակի օրերին համալսարանում մուտքը միայն ռեկտորի թույլատվությամբ կազմակերպելու որոշումը, քանի որ շատ ուսանողական միջոցառումներ և դրանց կազմակերպման աշխատանքերը իրականանում են հենց այդ օրերին և ժամերին:

**Ա. Սիմոնյան** - Խոսքը մասսայական մուտքը սահմանափակելու մասին է, բայց ոչ արգելելու և առանձին զեկուցագրերի համաձայն, մենք շատ լաբորատորիաների աշխատակիցների թույլատրում ենք: Այդ որոշումը ուղղված է միայն կանոնակարգմանը և հսկողության բարձրացմանը:

**Ս. Սարգսյան (խորհրդի նախագահ)** - պարոն Սիմոնյան, օրենքի խախտում այստեղ չկա, եթե ուսանողները ցանկանում են ոչ աշխատանքային ժամերին և օրերին մտնել համալսարան: Եթե խոսքը կոմունալ ծախսերի խնայողության մասին է, ապա դա

հասկանալի է: Խոսքը չի վերաբերվում կիրակի օրվան, սակայն երեկոյան ժամերին և շաբաթ օրը կարելի է ներկայացնել ցուցակ և կազմակերպել այդ հարցը: Այլ հարցեր կա՞ն:

**Ց. Ակուայան** – Շատ հարցեր, որոնք այսօր ուսանողների կողմից բարձրացվեցին, տարվա ընթացքում ևս քննարկվել են և գիտական խորհրդում, և ռեկտորատի նիստերում: Սակայն եղել են մի շարք խնդիրներ, որոնք վերաբերվել են ուսանողական տեղափոխություններին, ուսանողական փոխանակման ծրագրերին, շինարարական խնդիրներին, երբ մենք փորձել ենք տեղեկատվություն ստանալ, բազմիցս մերժում ենք ստացել: Այդ հարցով դիմել ենք նաև նախարարին: Ես խնդիրը բարձրացնում եմ խորհրդի անդամ ուսանողների անունից և առաջարկում եմ ընդունել կարգ, որի համաձայն խորհրդի անդամ ուսանողները կարող են ստանալ անհրաժեշտ տեղեկատվությունը:

**Ս. Սարգսյան (խորհրդի նախագահ)** - Ինչո՞ւ եք նշում խորհրդի անդամ ուսանողներին, ես կարծում եմ, որ դա ազատ տեղեկատվություն է և պետք է համապատասխան հրամանով բոլոր ռեկտորներին հանձնարարել տեղափոխությունների հրամանը ուժի մեջ մտած համարել միայն հրապարակումից հետո: Թաքցնելու ոչ մի խնդիր չկա:

**Ա. Սիմոնյան** - Պարոն Նախագահ, Ցոլակը նույն հարցով գրավոր դիմել է ինձ պահանջել է գործուղումների ցուցակները, մեկ այլ հարցով դիմել է նախարարին պահանջելով միայն ուսանողական ծրագրերով գործուղումները: Նույնը վերաբերվում է տեղափոխություններին, թվական տվյալները գաղտնիք չեն և այս կամ այլ կերպով արտացոլված են հաշվետվություններում: Իհարկե, մենք կարող ենք այդ տվյալները հավելյալ ներկայացնել:

**Ս. Սարգսյան (խորհրդի նախագահ)** - Եթե չկան այլ հարցեր, ապա առիթից օգտվելով ցանկանում եմ շնորհավորել բոլորիդ սպասվող Ամանորի կապակցությամբ, ցանկանում եմ, որ գալիք 2011 թվականը մեր ժողովրդի համար ընդհանրապես և խորհրդի անդամների համար մասնավորապես լինի ավելի հաջողված տարի, քան 2010 թվականը: 2011 թ.-ին մեր երկրում նոր փոփոխություններ են տեղի ունենալու և կցանկանայի, որ բոլորս ակտիվ մասնակցեինք այդ փոփոխություններին և, ի վերջո, որպեսզի կարողանանք լուրջ առաջընթաց գրանցել: Երևանի պետական համալսարանը միշտ եղել է առաջամարտիկների շարքում և ես կցանկանայի որ

այստեղ լինելը համալսարանական ոգի, ազատ մտածելու և արտահայտվելու, բայց ոչ երեսպաշտություն անելու կամ ամենատարբեր խնդիրներից ելնելով, համալսարանականին ոչ հարիր գործունեությամբ զբաղվել մթնոլորտ: Խնդրում են շնորհավորեք նաև ձեր ընտանիքի անդամներին, հույս և հավատ փոխանցեք, ասեք, որ գնալով ամեն ինչ լավ է լինելու, խնդիրներ միշտ եղել և լինելու են, սակայն կարևորը միշտ ճիշտ ճանապարհով շարժվելն է:

Խորհրդի նախագահ՝

Ս. Սարգսյան

Քարտուղար՝

Դ. Հայրապետյան

24.12.2010թ.